Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Արժեքային համակարգի զարգացումը հարցադրումների մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ԴՊՐՈՑ՝ <<Վ. Գետաշենի N1 միջնակարգ դպրոց>>

Մարտունի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....3

2. Գրական ակնարկ.....5

3. Փորձարարական հետազոտություն.....6

3.1 Խմբի նկարագիր.....6

3.2 Փորձարարական դաս-1.....7

3.3 Փորձարարական դաս-2.....8

4. Վերլուծություն.....9

5. Գրականության ցանկ.....9

6. Հավելված.....10

1.Դասապլան-1.....10

2.Դասապլան-2.....13

1. Ներածություն

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Այն ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլ նաև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համխումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ ո բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Նվիրական մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն, է, որը լավագույն կերպով մատուցվում գրականության, հայոց պատմության ժամերին, որտեղ արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ապրելու ու հարատևելու ձգտումը: Այդ դասերին աշակերտներին պետք է խրախուսել և հնարավորություն տալ ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Այս դեպքում կունենանք սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունը ու բարոյահոգեբանական հատկանիշները:

Արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

- գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

- հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը

- գիտակցի , որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:

- կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, արդարամիտ, բարեկիրթ, օրինապահ:

- գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:

- հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ:

- անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումն ու գերագնահատումը:

- դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

2. Գրական ակնարկ

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունն ու արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը:

Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է զբաղեցնում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռքբերվածը, այլև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը ինչպես նաև բարձրացնում է աշակերտների ինքնավստահությունը:

Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են սովորողների լիարժեք ներգրավվածությունը դասապրոցեսին:

Դրանցից հիմնականներն են՝

- նախապես զգուշացնել աշակերտներին, որ խրախուսվում է դասին մասնակցությունը: Յուրաքանչյուր աշակերտին տալ ձևավորող գնահատական:

- պետք է կարողանալ հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ յուրաքանչյուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին:

- Չափազանց կարևոր է հոգեբանական ապահով միջավայրի ստեղծումը:

Այս մեթոդի կիրառությունը ոչ միայն բարձրացնում է աշակերտների ներգրավվածությունը քննարկվող հարցի մասին, հնարավորինս շատ ու բազմակողմանի հարցեր տալու ճանապարհով նպաստում է նաև անդրադառնալ միջառարկայական կապերին և հստակ օրինակներով ցույց տալ ինչպես կարող են աշակերտները սովորածը կիրառել այլ առարկաների շրջանակում:

Եթե սովորողները դասի ընթացքում հարցեր են ձևակերպում և հարցեր տալիս, ուրեմն դասը հաջողված է, և ուսուցիչը հասել է իր նպատակին:

3. Փորձարարական հետազոտություն

3.1 Խմբի նկարագիր

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վ. Գետաշենի N1 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել անհատական տարբերակված ուսուցում հարցադրումների միջոցով: Այս մեթոդով կփորձեմ աշակերտներին ոչ միայն ներգրավվել դասապրոցեսին, այլ նաև զարգացնել նրանց արժեհամակարգը: Այս մեթոդը կնպաստի երեխայի ուսուցմանը ներգրավվելուն, երեխան կդառնա ինքնուրույն, հետ չի մնա ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում է 16 աշակերտ՝ 10 տղա, 6 աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ:

3-րդ տարին է , որ դասավանդում եմ այս դասարանում՝ հայոց լեզու և գրականություն: Ես շատ լավ գիտեմ յուրաքանչյուրի կարողություններն ու հմտությունները: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ոչ լիարժեք ներգրավվածությունը դասապրոցեսին, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 4 աշակերտների համար՝ կազմակերպելով տարբերակված ուսուցում՝ հարցադրումների մեթոդով, իսկ մնացածի հետ կատարեմ տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով նրանց հմտություններն ու կարողությունները:

3.1 Փորձարարական դաս 1

Այսօրվա դասը վերաբերում է Շիրվանզադեի <<Արտիստը>> պատմվածքին:

Դասաժամը սկսվեց տնային աշխատանքների ստուգումով, արվեց բանավոր հետադարձ կապ հարցադրումներով՝ նախորդ թեմայի գիտելիքները ստուգելու նպատակով: Տրվեց ուղղորդող հարցադրումներ, բաց հարցերին պատասխանում են բարձր առաջադիմություն ունեցողները, իսկ փակ հարցերին միջին ու ցածր առաջադիմություն ունեցողները: Ուշադրության կենտրոնում պահում եմ 4 միջին առաջադիմություն ունեցող աշակերտներին: Տարբերակված հարցերի միջոցով փորձում եմ զարգացնել նրանց արժեհամակարգը՝ առավելագույնս ներգրավվելով դասապրոցեսին:

A, B, C, D աշակերտները փորձում են բառեր ընտրել նկարագրելու համար Շիրվանզադեի <<Արտիստը>> պատմվածքի գլխավոր հերոս Լևոնին: Անգամ փորձում են Լևոնի և իրենց շրջապատի մարդկանց միջև նմանություն գտնել: Դասն ավարտելուց հետո կատարվեց հետադարձ կապ հարցադրումների միջոցով: Նոր դասը հաղորդվեց կարճ դասախոսությամբ՝ ստեղծելով միջառարկայական կապ հայոց լեզվի հետ:

Գնահատվեցին աշակերտները և ըստ իրենց կարողությունների՝ տրվեցին տարբերակված առաջադրանքներ դասագրքից:

3.2 Փորձարարական դաս 2

Այսօրվա դասի թեման է Ռաֆֆու <<Խենթը>> վեպը: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, քննարկվեցին նախորդ դասից անհասկանալի մնացած հարցերը: Դասը սկսվեց տարբերակված հարցադրումներով: Աշակերտները իրենց գոհունակությունը հայտնեցին, քանի որ այն ավելի արդյունավետ է, և բոլորն են մասնակցում դասապրոցեսին:

Աշակերտներին այս անգամ ևս տարբերակված հարցադրումներով առաջադրանք տրվեց: Բարձր առաջադիմություն ունեցողները աշխատում էին բնագրի վրա՝ բնագրից դուրս հանելով Վարդանին բնութագրող բառեր, իսկ A,B,C,D աշակերտներին բաժանվեցին թերթիկներ:

Աշակերտները մեծ ոգևորությամբ մասնակցում էին դասին, դատողություններ անում, անգամ ուշադրության կենտրոնում գտնվող աշակերտները հարցեր էին տալիս, պատասխանում հարցերին: Ուշադրության կենտրոնում գտնվող աշակերտները ընտրում էին բառեր բնութագրելու համար Վարդանին՝ նաև նշելով նրա ամենակարևոր հատկանիշը՝ հայրենասիրությունը, զուգահեռներ էին տանում Վարդանի և ներկայիս հերոսների միջև:

Նոր դասը հաղորդվեց կարճ դասախոսությամբ՝ ստեղծելով միջառարկայական կապ հայոց պատմության հետ: Այնուհետև գնահատվեցին աշակերտները և հանձնարարվեց տնային աշխատանք՝ իրենց կարողություններին ու հմտություններին համապատասխան:

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար անցկացվեց 2 տարբերակված դաս, որի ժամանակ 4 միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ պատասխանեցին անհատական տարբերակված հարցադրումներին: Ամեն հաջորդ տարբերակված դասաժամին ամբողջ դասարանի համար քննարկվեց տարբերակված հարցադրումների պատասխանների սխալները, տրամադրվեց գրավոր ու բանավոր հետադարձ կապ: Հարցադրումների մեթոդը շատ արդյունավետ էր, քանի որ այն ապահովեց և միջին ու ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավվածությունը դասին: Հարցադրումների մեթոդը մեծ ազդեցություն ունեցավ արժեքային համակարգի ամրապնդման ու զարգացման մեջ:

Միջին ու ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին հնարավորություն տրվեց ինքնուրույն աշխատելու հմտություն ձեռք բերել:

Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության , որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. Հարցադրումների մեթոդի կիրառումը դասաժամերին:
2. Գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում
3. Թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

5. Գրականության ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

2. Հ. Հովհաննիսյան և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ., 157 էջ:

3. Դ. Գասպարյան, Գրականություն: 8-րդ դասարանի դասագիրք, Եր.,<<Տիրգրան Մեծ>>, 2012, 256 էջ:

6.Հավելված

Դասապլան 1

Առարկա՝	**Գրականություն**	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	**1**	**Դասարան**	**8-րդ**
Թեմա՝	Շիրվանզադե <<Արտիստը >> պատմվածքը, 2-րդ դասաժամ						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, A4 չափի թղթեր, գունավոր մարկերներ:						
Դասի նպատակը՝	• Զարգացնել գրական երկը հասկանալու և գաղափարական բովանդակությունը ներկայացնելու կարողություն: • Գրական հերոսի բնավորության գործողությունների հոգեբանական շարժառիթների մասին գրավոր և բանավոր արտահայտելու կարողություն:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:							
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա՝ • Ներկայացնել պատմվածքի բովանդակությունը, արտահայտել հիմնական գաղափարը • Բացահայտել կերպարի բնավորության հիմնական գծերը, հասկանալ գործողությունների հոգեբանական շարժառիթները:						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
• Սկիզբ /5ր/	Բացել դասագրքերը, ներկայացնել	Ողջունել դասարանին, ստուգել տնային					

	տնային աշխատանքները:	աշխատանքները, պատասխանել աշակերտների անհասկանալի մնացած հարցերին:		
• Ընթացքը / 25ր/	Պատասխանում են հարցերին, փոխադարձ հարցեր տալիս, բաց հարցերին պատասխանում են բարձր առաջադիմություն ունեցողները, իսկ փակ հարցերին պատասխանում են միջին և ցածր առաջադիմություն ունեցողները	Տալ ուղղորդող հարցադրումներ՝ աշակերտներին ներգրավվելով դասապրոցեսին:	Ո՞վ է Շիրվանզադեն: Որո՞նք են Շիրվանզադեի լավագույն ստեղծագործությունները: Ո՞վ է <<Արտիստը>> պատմվածքի գլխավոր հերոսը:	Ուղղորդող հարցադրումներ, կանխատեսման աղյուսակ
	Տրվում է առաջադրանքներ, բարձր առաջադիմություն ունեցողները աշխատում են բնագրի վրա, իսկ A, B, C, D աշակերտների ուշադրության կենտրոնում պահել, տալ տարբերակված հարցադրումներ:	Ուսուցիչը առաջադրանքների ու հարցերի միջոցով փորձում է զարգացնել ու ամրապնդել երեխաների մոտ վեհ արժանիքներից՝ ազնվությունն ու արժանապատվությունը:	Ազնվություն ասելով ի՞նչ եք հասկանում: Որտե՞ղ է երևում Լևոնի ազնվությունն ու արժանապատվությունը: Ի՞նչ տարբերություն կա Լևոնի ու Գևորգի միջև:	

• 10րոպե • Ավարտ 5ր	Ուշադրության կենտրոնում գտնվող աշակերտները փորձում են նկարագրել Լևոնին, տալիս են նրան բնութագրող բառեր: Նմանություններ և տարբերություններ են գտնում շրջապատի մարդկանց և Լևոնի միջև: Լուռ լսում են դասը կատարում նշումներ:	Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն: Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում:		Կարճ դասախոսություն՝ ստեղծելով միջառարկայական կապ (հայոց լեզու)
Տնային աշխատանք 3 ր	Բնագրից դուրս հանել անծանոթ բառերը, բառարանի օգնությամբ տալ դրանց բացատրությունը:			

Դասապլան 2

Առարկա՝	Գրականություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	8-րդ
Թեմա՝	Ռաֆֆու <<Խենթը >> վեպը, 3-րդ դասաժամ						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, դասագիրք, A4 չափի թղթեր, գունավոր թերթիկներ:						
Դասի նպատակը՝	• Արժևորել և ներկայացնել <<Խենթը>> վեպը: • Ներկայացնել գլխավոր կերպարին, տալ նրա հոգեբանական բնութագիրը: • Հայրենասիրության, ազգային գաղափարների գիտակցում:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:							
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա՝ • Վերլուծել և մեկնաբանել <<Խենթը>> վեպը: • Ներկայացնել վեպի գլխավոր հերոսին, վերլուծել կերպարը: • Գիտակցել հայրենասիրության, ազգային գաղափարների կարևորությունը:						
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
• Սկիզբ /5ր/	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:	Կիրառելով ԽԻԿ համակարգը խթանման փուլում ուսուցիչը		Մտագրոհ			

• Ընթացք /25ր/	Ներկայացնել տնային աշխատանքները: Տրվում է առաջադրանք: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները աշխատում են բնագրի վրա՝ վեր հանելով Վարդանին բնութագրող բառեր և բառակապակցություններ, իսկ դասարանի 4 աշակերտներ, որոնք ուսուցչի ուշադրության կենտրոնում են թերթիկներ են ստանում: Թերթիկների մեջ ներառված են բառային շարքեր, որտեղից 4 աշակերտները պիտի ընդգծեն Վարդանին բնորոշ բառերը:Նույնիսկ փորձում են նմանություններ գտնել Վարդանի ու ներկայիս հերոսների միջև: Աշակերտերը	իրականացնում է մտագրոհի մեթոդը : Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը հսկում է աշխատանքները, տալիս ուղղորդող հարցադրումներ, միաժամանակն ուշադրության կենտոնում պահելով 4 աշակերտներին:	Ինչու՞ է վերնագրված <<խենթ>>: Ո՞վ է Վարդանը: Ի՞նչ է հայրենասիրությունը: Ի՞նչ քայլի է գնում Վարդանը և ինչու՞:	Հարցադրումների մեթոդ Ուղղորդված ընթերցանություն, կանխատեսման աղյուսակ

• /10ր/ • Ավարտ /5ր/	կատարում են ուսուցչի տված առաջադրանքը: Աշակերտները լրացնում են ուսուցչի տված թերթիկը և հանձնում:	Կշռադատման , գնահատման փուլում հանձնարարվում է քառաբաժանի մեթոդը: Վերջում հանձնարարում է յուրաքանչյուր աշակերտի թերթիկի վրա նշել սեփական ձեռքբերումները և թերըմբռնումները: Ամփոփում է աշխատանքը և գնահատում:		Քառաբաժանի մեթոդ
Տնային աշխատանք 3 ր	Տարբերակված տնային առաջադրանք: Դուրս հանել անծանոթ բառերը, բառարանի օգնությամբ տալ դրանց բացատրությունը(A,B,C,D աշակերտներ): 4, 5 նախադասությամբ բնութագրել Վարդանին:			